

ՇԻՐԱԿԻ ՄՏԱԽՈՐ-ԳՐԱԿԱՆ ՄԾԱԿՈՅԹԻ (ԳՐՉՈՒԹԵԱՆ) ԿԵՆՏՐՈՆՆԵՐԸ ԵՒ ԲԱԳՐԱՏՈՒՆԵԱՑ-ԱՆԻԱԿԱՆ ՇՐՋԱՆԻ ՀԱՅ ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹԻՒՆԸ (Թ-ԺԱ. ԴԴ., ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՍՈՒԹԻՒՆ)¹

Գեորգ Տեր-Վարդանեսան

Որեւէ երկրի կամ ազգային-վարչական միաւորի նման՝ Հայաստանի ցանկացած նահանգի կամ գաւառի որեւէ ժամանակի մտաւոր մշակոյթն ուսումնասիրելիս եւս պէտք է նկատել, որ կեանքի քաղաքական-տնտեսական պայմանների համեմատ՝ տարածութեան եւ ժամանակի մէջ մշակոյթն ամբողջ երկրի համար յարաբերականօրէն միասնական է լինում: Ըստ այսմ, Մեծ Հայքի կենտրոնական՝ Այրարատ նահանգի Շիրակ գաւառի մտաւոր մշակոյթի ծաղկումը, անշուշտ, եղել է Բագրատունեաց թագաւորութեան գոյութեան ընդամէնը 160 տարուայ կարճ ընթացքում (885-1045 թթ.), առանձնապէս՝ 961-1045 թթ.՝ երբ ընդամէնը 85 տարի երկրի մայրաքաղաքը Շիրակի հնադարեան Անի բերդաքաղաքն էր: Պատմութեան մնացած շրջանների համար Շիրակի մտաւոր մշակոյթի դրսեւորումները, բնականաբար, նիւթական եւ աղբիւրագիտական առկայ տուեալներից դուրս, միշտ պէտք է ընկալուեն եւ գնահատուեն ըստ երկրի ընդհանուր կացութեան եւ պատկերի, ապա՝ միշտ սերտօրէն կապակցուած դրկից՝ կայուն եւ ապահով կարեւոր, առանձնապէս՝ Հաղբատ եւ Սանահին վանական խոշոր կենտրոնների մշակութային կեանքի հետ. աւելին՝ վերջիններս եւ նրանց նման այլ կենտրոններ նոյնպէս հիմնուել ու ձեւաւորուել են Բագրատունեաց թագաւորութեան շրջանում, որի մշակութային միջավայրում լինելով եւ նրա աւանդոյթները կրելով, իրենց գործունէութիւնը կարողացել են շարունակել միայն մեկուսի եւ անմատչելի դիրք ունենալու շնորհիւ,

իսկ բուն Շիրակի գիտա-մշակութային կեանքի ամեանաշխոյժ եւ արգասաբեր շրջանը, բնականաբար, եղել են Ը-ԺԱ., մասամբ էլ՝ ԺԲ-ԺԳ. դարերը:

Բագրատունեաց թագաւորութեան շրջանի ուսումնա-գիտական կենտրոններն ընդհանուր գծերով պատկերուած են այդ ասպարէզին վերաբերող հիմնական տեղեկատու գրականութեան մէջ². Եւ քանի որ այս կարճ շարադրանքով բոլոր կենտրոնները մանրամասն քննելը կամ նրանց բոլորի ստեղծած ու պահպանած ժառանգութիւնը ներկայացնելն անհնար է, ուստի բաւարում ենք հիմնական ուրուագծերով³ ներկայացնելով զուտ Շիրակի կենտրոնները, որոնք սկզբնաւորուել են Հայերէն գրերի եւ գրականութեան ստեղծման արշալոյսին՝ Ե. դարի սկզբին. այսպէս՝ Տեկորի տաճարին (Անիի ամրոցի հոգեւոր կենտրոն) կից դպրոցում Ե. դարում գործել է գիտնական եւ ուսուցիչ Թաթուլ ճգնաւորը, որի երկերից մեզ է հասել իր աշակերտին հասցէագրուած «Խրատք»ը: Շիրակի Դպրեվանքը յայտնի էր դեռեւս է. դարի սկզբներում եւ փայլում էր Կոմիտաս կաթողիկոսի օրօք (615-628), իսկ Ներսէս Գ. Տայեցի կաթողիկոսի (641-661) յանձնարարութեամբ նրա ուսուցչապետ Բարսեղ ձոն վարդապետը կարգաւորեց եւ վերջնական տեսք տուեց հոգեւոր երգերի Շարակնոց ժողովածուին՝ նրան աւելացնելով նաեւ իր գրածները, ապա աւելի աշխոյժ գործունէութիւն ունեցաւ Ժ. դարում եւ հետագայում⁴: Նոյն է. դարում մեծ հռչակ ունէր նաեւ Շիրակ գաւառում (Անիում կամ Անանիա գիւղում) ծնուած եւ

նոյն տեղում իր հիմնական գործունէութիւնը ծաւալած Անանիա Շիրակացու դպրոցը (շուրջ 610 - մինչեւ 690 թթ.), որ ուսուցչի գիտութեան համեմատ՝ անպայման ունեցել է շեշտուած մաթեմատիկական, տոմարագիտական եւ աստղագիտական ուղղութիւն⁵:

Բագրատունեաց շրջանի Շիրակի նշանաւոր վանքերի մեծ մասում բաւական շատ կան թագաւորների, նրանց ժամանակի անուանի իշխանների եւ ընդհանրապէս ազնուականների կամ ունեւոր քաղաքացիների նուիրատուական արձանագրութիւններ, որոնցով վանքերը որպէս կալուածք ստացել են գիւղեր, ագարակներ, այգիներ, ազատուել են հարկերից եւ ստացել այլ դիւրութիւններ⁶. Ըստ այսմ՝ տնտեսապէս հզօր լինելով, պատմական աղբիւրների միաբան վկայութեամբ՝ այդ վանքերը գործուն եւ աշխոյժ մասնակցութիւն ունէին Անի մայրաքաղաքի եւ երկրի մշակութային-ուսումնական կեանքին:

Աղբիւրների ճշգրիտ վկայութեամբ՝ Անիական շրջանում եւս, ինչպէս Հայ իրականութեան մէջ գրեթէ միշտ, դպրոցները եղել են հիմնականում երեք կարգի.

ա. Հանրակրթական-հասարակական. սրանք համարժէք էին ներկայիս պարտադիր կրթութիւն ապահովող դպրոցներին՝ կրթում էին աշխարհականներին եւ հոգեւորականներին, սովորեցնում էին գրել, կարդալ, երգեցողութիւն, տարրական թուաբանութիւն⁷.

բ. Քահանայական ուսման (միջնակարգ)՝ սովորում էին. Աւետարան եւ Սաղմոսարան (բերանացի), ծէս եւ ընդհանրապէս քահանայագործութեան համար անհրաժեշտ բոլոր գիտելիքները.

գ. Վարդապետարաններ՝ բարձրագոյն դպրոցներ, ուր որոշ տարբերութիւններով, 7-8 տարում, սովորում էին հետեւեալ առարկաները. Սուրբ գիրք (երբեմն սերտում էին բերանացի) եւ նրա բոլոր գրքերի մեկնութիւններ, դաւանաբանութիւն (եկեղեցու հայրերի գործերի հիման վրայ), Եօթ ազատ արուեստները կամ եռեակ եւ քառեակ գիտութիւնները՝ Քերականութիւն եւ նրա մեկնութիւն, Ճարտասանութիւն, Տրամաբանութիւն (Փիլիսոփայութիւն), Մաթեմատիկա, Երկրաչափութիւն, Աստղաբաշխութիւն, Երաժշտութիւն (երգեցողութիւն). ապա՝ աւելին՝ Պատմութիւն, Մատենագրութիւն, Քերթողութիւն (տաղաչափութիւն), Նկարչութիւն, Գրչութեան արուեստ եւ այլն⁸: Այս դպրոցները գիտութեան, մտաւոր մշակոյթի եւ գրչութեան կենտրոններն էին եւ սովորաբար գործում էին արքայական տան, իշխանների եւ եպիսկոպոսարանների հովանաւորութեամբ ու նպաստով: Այդպիսի մի կենտրոն էր, օրինակ, Ագարակը, որի արձանագրութիւնների մէջ Ղ. Ալիշանը տեսնում է Աշոտ Գ. Ողորմած (977-990) թագաւորի եւ Անանիա Ա. Մոկացի (946-968) կաթողիկոսի անունները¹⁰:

Այս շրջանի բարձրագոյն դպրոցների մի կարեւոր յատկանիշն էլ այն էր, որ նրանցում ուսանում էին նաեւ իշխանական-ազնուականական տների շատ զաւակներ, որոնք յաճախ թողել են նաեւ մատենագրական, անգամ՝ աստուածաբանական երկեր. Գրիգոր Մագիստրոսն այս առումով երեւելի է, բայց՝ ո՛չ միակը. ասպիսին էր Արգինայի վարդապետարանի սան, Բագրեւանդի իշխան Ատրնեբուհը՝ «այր կորովի եւ յոյժ հանճարեղ... բանիբուն իմաստասէր»¹¹ եւ շատ ուրիշներ: Նրանց շնորհիւ գիտութեան մէջ զգալի դարձաւ եւ զարգացաւ նաեւ բնագիտութիւնը եւ բնագիտական փիլիսոփայութիւնը եւ բնագիտական միտքը:

Ժ. դարի գրեթե ամբողջ ընթացքում Արգինայում (Թ. դ. վերջերին Բագրատունիների թագաւորութեան մայրաքաղաք դարձած Շիրակականին մօտ) գործում էր Հայոց կաթողիկոսարանը, ուր, ըստ պատմիչների տեղեկութիւնների, կար առանձին հարուստ մատենադարան-գրատուն, որտեղ ծրագրուած ձեւով հաւաքուել են կամ տեղում գրուել բազմաթիւ ձեռագրեր: Մատենադարանի հիմքի վրայ էլ գործում էր կաթողիկոսարանի վարդապետարանը՝ բարձրագոյն դպրոցը, որ ունեցել է հեղինակաւոր տասնեակ ուսուցչապետներ եւ նոյնչափ յայտնի հոգեւորական ու աշխարհական շրջանաւարտներ¹²: Կարեւոր կենտրոններ էին Ե. դ. կառուցուած Տեկորի եւ Մրէնի տաճարները (Մրէնը Բագրատունեաց շրջանում անցիների ամառանոցն էր) եւ հինգ մեծ տաճար ունեցող Խծկոնքի վանական համալիրը (կառ. է., Թ-Ժ. դդ.). այդպիսին էին նաեւ Արջոյ Առիճը (Ժ. դ.)¹³, Լմբատը (Ջ. դ.)¹⁴, Բագնայրը (Ժ-ԺԳ. դդ.)¹⁵, Մարմաշէնը (Ժ-ԺԳ. դդ.)¹⁶: Այս բոլոր վանական կենտրոնների կառոյցները նաեւ հայկական ու համաշխարհային ճարտարապետութեան հին եւ կարեւոր յուշարձաններ էին¹⁷:

Սակայն, ամենաաշխոյժը, բնականաբար եղել է մայրաքաղաք Անիի եւ նրա տարբեր հաստատութիւնների մշակութային կեանքը: Արգինայից եկած՝ Կաթողիկոսարանի վարդապետարանից բացի, այստեղ գործել են Գրիգոր Մագիստրոսի եւ Յովհաննէս Սարկաւազի ճեմարանները: Մագիստրոսի ճեմարանը՝ անտիկ իմաստասէրների աւանդոյթը լիովին կրող ուսուցչի հետ տեղաշարժուելով, գործել է Անիում, Սանահնում, Բջնիում, Տարօնի Ս. Կարապետ վանքում¹⁸:

Ուշագրաւ է, որ մինչեւ վերջերս Հայագիտութեան մէջ համարուում էր, թէ

«Անիի դպրոցում գրուած կամ ընդօրինակուած ձեռագրերից մեզ քիչ բան է հասել»¹⁹: Մինչդեռ բաւական էր նպտակադիր մի ուսումնասիրութիւն, որպէսզի պատմագրական, յիշատակարանային, վիճագրական եւ այլ աղբիւրների տեղեկութիւնների համադրումով պարզուէին Անիի Արքայական, Կաթողիկոսարանի եւ որոշ այլ եկեղեցիների գրադարանների ընդհանուր բնութագրերը, Կաթողիկոսարանի, Բեխենց վանքի, Անիին մօտակայ եւ մշակութային առումով նրա հետ միասնացած Հոռոմոս²⁰, Բագնայր, Արջոյ Առիճ վանքերի գրչատների եւ նրանցում ստեղծագործած բարձրարուեստ գրիչների ու ծաղկողների անզուգական եւ ինքնատիպ արուեստը²¹:

Միջնադարում վանք-կրթութիւն-գրադարան երեւոյթներն ամէնուր միասնական են եղել: Քիչ թէ շատ նշանակալի բոլոր վանքերի եւ մեծ եկեղեցիների վիճական արձանագրութիւնների մէջ կան նրանց ձեռագրեր նուիրելուն վերաբերող տեղեկութիւններ²²: Մեծ եւ տեւական գործունէութիւն ունեցած վանքերում էլ միշտ կային գրադարաններ, որոնց կազմը յաճախ նաեւ փոփոխուում էր. որոշ գրքեր տարւում էին ուրիշ կենտրոններ, փոխարէնը՝ այլ տեղերից բերւում էին անհրաժեշտ նորերը, ուշ միջնադարում նրանց մէջ էին մտնում նաեւ տպագիր (ներկայիս եզրով՝ հնատիպ) գրքեր: Այս ամէնի շնորհիւ որեւէ տեղի, նաեւ՝ Շիրակի, կենտրոնների գրադարանները լաւ ուսումնասիրուած կարող են լինել միայն այն ժամանակ, երբ գրչութեան եւ հետագայ յիշատակարաններով, գրադարանային նշումներով, կնիքներով եւ գրականութեան շարժին վերաբերող տեղեկութիւններով պարզուեն տարբեր ժամանակներում նրանց պատկանած միաւորներն ու վեր-

ջիններիս պարունակած գրական նիւթերի ամբողջութիւնը²³:

Բնականաբար, առանձին յօդուածներով այս գրքում ներկայացուած՝ Հայ մատենագրութեան կամ միջնադարեան գրականութեան ու գիտութիւնների տարբերասպարէզների երեւելի մշակների՝ մատենագիրների, պատմիչների, փիլիսոփաների, ճարտասանների, քերականների, երաժիշտների, իրաւագէտների, մանրանկարիչների, գրիչների մեծ մասը Անիի բարձրագոյն եւ ընդհանրապէս անհական միջավայրի դպրոցներում նախ ուսանել են, ապա՝ գործել եւ իրենց երկերը (գոնէ նրանց առաջին օրինակ-գրքերը) ստեղծել «հազար ու մէկ եկեղեցիների» քաղաք Անիում եւ նրա մշակութային միջավայրում: Այսուհանդերձ, Շիրակի ձեռագրական ժառանգութիւնից մեզ քիչ բան է հասել. իսկ սա ունի իր պատճառները, որոնք, ցաւօք, ընդհանրական են Հայաստանի վարչական բոլոր միաւորների համար. թուարկենք մի քանիսը.

Պատմական յարափոփոխ եւ աննպաստ պայմանների հետեւանքով Հայ գրչութեան վաղ դարերից պահպանուած ձեռագիր յուշարձաններն անհամեմատ քիչ են. հայերէն ձեռագիր գրքի՝ ամբողջ աշխարհում պահպանուած բոլոր միաւորների քանակն այսօր հաշւում ենք շուրջ 30.000 (ստեղծուածի չնչին մասն է). պատկերացում կարելի է կազմել սրա՝ մօտ կէսն իր մէջ ամփոփող՝ Մաշտոցեան Մատենադարանի օրինակով. այստեղ գտնուող՝ մօտ 11.200 ամբողջական միաւորից ընդամէնը 498-ն է (4,5 տոկոսից պակասը) վերաբերում Թ-ԺԳ դարերին²⁴, նրանցից ճշգրիտ թուական ունեն միայն 239-ը, որոնց միայն փոքր մասի գրչութեան վայրն է յայտնի, իսկ մնացած 259-ի թուականը մօտաւոր է, գրչութեան վայրը՝ բոլորովին անյայտ:

Շարունակական աւերումների եւ երկրի բուն՝ Հայկական բնակչութեան արտագաղթների պատճառով ներկայ (վստահաբար՝ նաեւ պատմական) Հայաստանի գրեթէ ամէն բնակավայրի տարածքներում կայ միջնադարեան նուագագոյնը մի քանի լքուած բնակատեղի՝ «շէնատեղ»եր, որոնցում գոնէ մի հատիկ վիճագիր արձանագրութիւն յայտնաբերուած կամ պահպանուած չլինելու պատճառով՝ նրանց անունները մեզ յայտնի չեն: Սրա կողքը՝ չգիտենք շատ ձեռագրերի՝ յայտնի անուններով գրչութեան վայրերի ներկայ տեղը. պարզ է, որ մանրակրկիտ հետազօտութիւններով անանուն բնակատեղիները եւ գրչութեան չտեղորոշուած վայրերը յաճախ կարող են նոյնանալ: Ապա՝ յիշատակարանների ընկած լինելու պատճառով շատ ձեռագրերի գրչութեան վայրերը մեզ յայտնի չեն. երբ ապագայում Հայկական Հնագրութիւնն ու ձեռագրագիտութիւնն այնքան զարգանան, որ երկրորդական թուացող օժանդակ յատկանիշների օգնութեամբ Հնարաւոր լինի բաւական ճշգրիտ թուագրել եւ տեղորոշել անթուական եւ գրչութեան վայրն աննպաստ պայմանների հետեւանքով Հայ գրչութեան վաղ դարերից պահպանուած ձեռագիր յուշարձաններն անհամեմատ քիչ են. հայերէն ձեռագիր գրքի՝ ամբողջ աշխարհում պահպանուած բոլոր միաւորների քանակն այսօր հաշւում ենք շուրջ 30.000 (ստեղծուածի չնչին մասն է). պատկերացում կարելի է կազմել սրա՝ մօտ կէսն իր մէջ ամփոփող՝ Մաշտոցեան Մատենադարանի օրինակով. այստեղ գտնուող՝ մօտ 11.200 ամբողջական միաւորից ընդամէնը 498-ն է (4,5 տոկոսից պակասը) վերաբերում Թ-ԺԳ դարերին²⁴, նրանցից ճշգրիտ թուական ունեն միայն 239-ը, որոնց միայն փոքր մասի գրչութեան վայրն է յայտնի, իսկ մնացած 259-ի թուականը մօտաւոր է, գրչութեան վայրը՝ բոլորովին անյայտ:

Միջնադարի մշակոյթի, կրթութեան, արուեստի եւ այլ առումներով առայժմ

դեռեւս բաւական յարաբերական են նաեւ «Գրչութեան կենտրոն»ի եւ նրա մշակոյթի իւրայատուկութիւնների հասկացութիւնները, որովհետեւ, ասենք, ընդօրինակելու համար վաղուց փնտրուած՝ հազուադէպ կամ նոր թարգմանուած որեւէ երկի հիմք օրինակը Կիլիկիայից բերում էին բուն Հայաստան եւ դարձնում այստեղի որեւէ կամ մի քանի վանքի ու գաւառի մշակութային սեփականութիւն: Կամ՝ որեւէ ձեռագիր գիրք գրուում էր մի գաւառում, նկարագրուում մի այլ տեղում, կազմւում՝ երրորդ վանքում, գործածւում՝ չորրորդ տեղում. էլ չասենք, որ յաճախակի տեղաշարժում էր մի տեղից միւսը եւ իր կենսագրութեամբ դառնում աշխարհագրական մի քանի միջավայրերի կամ ազգային-ընդհանրական մշակութային կեանքի կենսական մաս: Ըստ այս ամէնի, Բագրատունեաց թագաւորութեան շրջանում Հայաստանի տարբեր գաւառներում գոյութիւն ունեցած կրթութեան ու գիտութեան, ստեղծուած գրական երկերի եւ ձեռագիր յուշարձանների մէջ լիովին իրաւացիօրէն կարող ենք փնտրել մայրաքաղաքային Շիրակ գաւառին յատուկ երեւոյթներ ու գծեր: Նոյն ձեւով էլ՝ Բագրատունեաց շրջանից առաջ եւ յետոյ Շիրակում ստեղծուած մշակութային բազմատեսակ յուշարձանների մէջ կան Հայաստանի հարեւան եւ հեռաւոր շրջանների մշակոյթների համար ընդհանրական բազմաթիւ յատկանիշներ եւ գծեր²⁵:

Բագրատունեաց պետութեան անկումը (1045 թ.), ապա մոնղոլական ակերիչ արշաւանքը (1236 թ.) մեծ վնաս հասցրին Հայաստանի, նաեւ՝ արքայանիստ Շիրակի տնտեսական ու մշակութային կեանքին, սակայն ակերիչը եղաւ Լենկ թեմուրի հրոսակների մուտքը Հայաստան (1387, 1394, 1399-1400 թթ.), որին յաջորդեցին

թուրքմէն տարբեր ցեղերի ներքին հակամարտութիւնները, ապա՝ թուրք-պարսկական դարաւոր պատերազմները: Սրանց պատճառով ԺԵ-ԺԶ. դդ.՝ ակերի քան երկու դար (մինչեւ 1639 թ. թուրք-պարսկական հաշտութիւն) Հայ մշակոյթի միայն եզակի՝ Լեռնային դժուարամատչելի վայրերի օջախներ կարողացան շարունակել իրենց գործունէութիւնը եւ դրանով իսկ դարձան մտաւոր ժառանգութեան պահպանման եւ ապագային փոխանցելու առաքելութիւն կատարած կենտրոններ: Մշակութային կեանքի ընդհանուր աշխուժացումը հնարաւոր եղաւ միայն ԺԷ. դ. առաջին կէսին, սակայն Շիրակի նման դաշտավայրային հարթ տեղերն արդէն հիմնականում դարձել էին թիւրքական խաշնարած ցեղերի բնակութեան հիմնական՝ ձմեռոցային վայրեր. երկրի այսպիսի մասերում Հայ բնակչութիւնը բաւական նօսրացել էր, ուստի եւ նման տեղերից պահպանուած մշակութային արժանիքները ստեղծուածի համեմատ բաւական քիչ են:

Բնական է, որ այսպիսի կացութեան մէջ Անիում եւ նրա շրջակայ Շիրակ գաւառում ստեղծուած մշակութային կարեւոր արդիւնքներից մէկից՝ ձեռագիր գրքերից պէտք է պահպանուած լինեն սոսկ առանձին միաւորներ, պատկերաւոր ասած՝ հազարից մէկը: Սակայն յիշենք նաեւ Հայ իրականութեան մէջ ցայտուն դրսեւորած՝ ընդհանուր-քրիստոնէական մի երեւոյթ. փոքր թէ մեծ՝ ամէն բնակավայր պէտք է ունենար իր եկեղեցին կամ եկեղեցիները, իսկ որեւէ գիւղի եկեղեցի անպայման պէտք է ունենար ծիսակատարութեան համար անհրաժեշտ նուազագոյնը հետեւեալ գրքերը. Աւետարան, Գանձարան, Ժամագիրք, Պատարագամատոյց, Ծառոց, Մաշտոց, Յայսմաւուրք, Շարակնոց, Սաղմոսարան, Տօնացոյց, Աղօթա-

գիրք, Քարոզգիրք. ուրեմն՝ կարող ենք վստահօրէն ասել, որ գիւղական եկեղեցիների համար այս տաս-տասներկու գիրքը յաճախ գրուում էին նոյն գիւղերում (ուրեմնք այսպիսի հարիւրաւոր օրինակներ): Ըստ այսմ, եթէ Հայաստանի եւ հայկական յայտնի որեւէ բնակավայրում, վանքում կամ եկեղեցում գրուած ձեռագիր այսօր մեզ յայտնի չէ, ապա ամենեւին չի նշանակում, թէ այդ բնակավայրից մեզ գրքային արդիւնք չի մնացել: Առաւել ցայտուն ձեւով նոյնն է նաեւ գիտական, ծիսական կամ այլ կարգի հանրայայտ եւ ընդհանրական գործերի բազմացման ու վերարտադրման օջախների՝ գրչութեան կենտրոնների մեզ հասած արդիւնքի խնդիրը:

Ուրեմն եւ՝ Շիրակում ստեղծուած եւ մեզ հասած գրքային ժառանգութեան պատկերն այսօր յայտնի է շատ ընդհանուր եւ մօտաւոր գծերով. եթէ քննարկում ենք ընդհանրապէս խնդիրը մտաւոր մշակոյթի կամ ուսումնագիտական որեւէ կենտրոնի, որտեղ ընթացիկ՝ լաւ կրթուած շրջանաւարտներ պատրաստելու հարցն ապահովելուց բացի, ստեղծուել են նաեւ գիտա-մշակութային տեւական արժէքներ՝ հետազօտութիւններ եւ դասագրքեր, ապա պատմական պայմանների անկայունութեան պատճառով այդպիսի բազմաթիւ կենտրոնների արտադրանքի զգալի մասն անյիշատակ կորսուել է²⁶:

Սակայն Շիրակի դաշտավայրը մշակութային վերազարթօնք ապրեց նոր ժամանակների տեւական խաղաղութեան եւ ապահովութեան հետ՝ 1828 թ. Արեւելեան Հայաստանի մի մասի հետ նաեւ Շիրակի արեւելեան մասի՝ Ռուսաստանի սահմանների մէջ մտնելուց յետոյ: Միայն երկու օրինակ.

է. դարում այստեղ կառուցուած եւ ԺԲ. դ. վերջերին բաւական ընդարձա-

կուած Հառիճի վանքն²⁷ ունեցել է մեծ հռչակ ստացած դպրոց, որ երբեմնակի ծաղկումներով եւ ընդհատումներով գործել է ըստ երեւոյթին մինչեւ ԺԳ. դ. վերջերը. ապա վանական կեանքն այստեղ վերականգնուեց 1830-ական թուականներին. որպէս հին դպրոցի ոգեկոչում՝ 1857 թ. բացուեց նորը, որ ժամանակին էջմիածնի կաթողիկոսարանի Գէորգեան ձեռնարանի նախապատրաստական բաժին էր, իսկ հիմա գործում է որպէս սովորական միջնակարգ դպրոց²⁸:

Միւսը՝ Ք. ա. երրորդ հազարամեակից ի վեր եւ միջնադարում անընդհատաբար գոյատեւած ու պատմական գանազան դէպքերի առիթով յիշատակուած Կումայրի (Ալեքսանդրապոլ, Լենինական, այժմ՝ Գիւմրի) բնակավայրը 1830 թ. ի վեր դարձել էր Ռուսաստանի սահմանային բերդաքաղաք, իսկ հետագայում՝ բնակչութեան քանակով եւ մշակութային կեանքի աշխուժութեամբ՝ Հայաստանի երկրորդ բնակավայրը, որպիսին եւ մնում է նաեւ այժմ²⁹:

Ինչպէս ասացինք, հակառակ աւատարմական շրջանի վարչա-քաղաքական մասնատուածութեանը, Հայաստանի պատմութեան այս եւ այլ ժամանակաշրջանների մտաւոր մշակոյթը միշտ միասնական է եղել, որովհետեւ Հայ իրականութեան մէջ ուսումնական, գիտական եւ ընդհանրապէս մշակութային փոխանակումները ներքին սահմանային արգելքներից զերծ են եղել, մշակոյթի գործիչների տեղաշարժերը եւ նորոյթների տարածումը բուն Հայաստանի տարբեր նահանգների, հետագայում էլ՝ Կիլիկեան Հայաստանի եւ հայկական տարբեր գաղթավայրերի միջեւ աշխոյժ են եղել. տեղային առանձնայատուկ դրսեւորումները, ծաղկումը, անկումը եւ ընդհանրապէս

քաւոր տեղեկութիւններ յայտնել ժամանակի եկեղեցական կեանքի եւ գործիչների մասին³⁹:

Անանիա Նարեկացի (ծն. թ. անյայտ, մահ. 978 թ.), Նարեկայ վանքի առաջնորդն էր եւ Ժ. դարի Նարեկեան դպրոցի հիմնադիրը, եղել է Գրիգոր Նարեկացու, Ուխտանէս պատմիչի եւ ուրիշների ուսուցիչը. մեզ են հասել նրա դաւանաբանական եւ շատագուցական մի շարք գրուածքներ, որոնք լրացնում են Ժ. դարի հայ հասարակական հոսանքների, յատկապէս՝ թոնդրակեան շարժման մասին մեր իմացութիւնները, հիմնականում Անանիայի գործերով ենք պատկերացնում նաեւ նարեկեան դպրոցի իւրայատկութիւնները⁴⁰:

Խոսրով Անճեացի (մ. ժ. 964 թ.)՝ Գրիգոր Նարեկացու հայրն էր. հոգեւորական է դարձել կնոջ մահից յետոյ, գրել է երկու մեկնողական-դասագրքային կարեւոր աշխատութիւն՝ Պատարագի եւ Ժամերգութեան մեկնութիւններ, որոնք նոյնէս լայն եւ տեւական գործածութիւն են ունեցել հայ եկեղեցում⁴¹:

Գրիգոր Նարեկացի (մ. ժ. 951-1005 թթ.). ապրել եւ գործել է Վանայ լճի հարաւային ափին գտնուող Նարեկայ վանքում. հիմնաւորապէս իւրացրել է Աստուածաշունչը եւ իր ժամանակ հայերէնով գոյութիւն ունեցած ամբողջ գրականութիւնը. եղել է տիպար ճշմարտացի եւ սեփական անձն ինքնամաքման ու Աստուծոյ նուիրած վանական-գիտնական. գրել է գեղարուեստական մեծ արժէք ունեցող նամակներ, ներբողներ, տաղեր, դանձեր, մեկնութիւններ (Երզ երգոցի եւ այլն), 1004-5 թթ. աւարտել է իր կարեւորագոյն երկը՝ սեփական մտածողութեամբ եւ ինքնատիպ բառապաշարով գրուած «Աղօթագիրք» կամ «Մատեան Ողբերգութեան»⁴², որ բոլոր ժամանակներ

ի համաշխարհային գրականութեան գլուխգործոցներից մէկն է. բանաստեղծական՝ անկրկնելի մեծ արուեստով՝ իրենով անձնաւորելով հողեղէն եւ մեղսագործ ու մեղաւոր մարդուն, Աստուծոյ ուղղուած աղերսներով ձգտում է մարդուն մաքրել ապականութիւնից ու մեղքերից: Հզօր երեւակայութիւն եւ կենսունակութիւն ունեցող քնարերգական այս երկի բնապաշտ հեղինակի մեղսագիտակ հոգին եւ աստուածաստեղծ բնութեան գեղատեսիլ պատկերներն իրերայաջորդ են: Նրա «Մատեան»ը հետագայ դարերի հայ հեղինակների համար եղել է ներշնչման եւ օրինակութեան առարկայ, ժողովրդի համար՝ Բժշկարան:

Յովհաննէս Կոզեռն Տարօնացի (ԺԱ. դ. առաջին կէս) ունեցել է իմաստուն գիտականի, ճշմարտի եւ ուսուցչի համբաւ. գրել է իր ժամանակի Պատմութիւնը, դաւանաբանական՝ Գիր հաւատոց երկը (երկուսն էլ չեն պահպանուել), Տոմարի մեկնութիւն եւ այլ մանր գործեր. բազմաթիւ ընդօրինակութիւններով պահպանուել է. նաեւ նրան վերագրուած մի Տեսիլ, որը գուշակում էր Քրիստոսի ծննդեան հազարամեակից յետոյ աշխարհի կործանումը⁴³:

Գրիգոր Մագիստրոս Պահլաւունի իշխանը (շուրջ 920-1059 թթ.) գուցէ թէ ամբողջ միջնադարի ամենաերեւելի հայ աշխարհական գիտնականն ու մատենագիրն է: Լաւագոյն կրթութիւն է ստացել Անիում, բազմագիտակ եւ հանրագիտակ էր. գիտէր մի շարք լեզուներ եւ տեղեակ էր մերձաւորարեւելեան ժողովուրդների մեծ մասի, յատկապէս՝ անտիկ եւ բիւզանդական մշակոյթներին, առանց երկմտելու նրան կարելի է կոչել իմաստասէր, մանկավարժ, լաւատեղեակ՝ կենսաբանութեանը, բժշկագիտութեանը, տիեզերագիտութեանը, երաժշտութեան տեսութեանը

եւ այլն: Լինելով հանդերձ աշխարհական եւ յայտնի պետական ու զինուորական գործիչ (անուան Մագիստրոս մակդիրը բիւզանդական արքունիքից ստացած զինուորական կոչումն է, եղել է նաեւ դուքս), ունեցել է եկեղեցական գրականութեան եւ աստուածաբանական հարցերի լաւագոյն իմացութիւններ, բայց միշտ ձգտել է աւելիին եւ ձեռք է բերել իր ժամանակի գրեթէ բոլոր գիտութիւններին՝ բնագիտութեանը, մաթեմատիկային, բժշկութեանը եւ այլնին վերաբերող գիտելիքներ, առանձին սէր եւ ձգտում է ունեցել հին յունական գիտութիւնների եւ գրականութեան նկատմամբ: Հիմնել է իր բարձրագոյն դպրոցը՝ Ճամարանը, որ եղել է շարժական բնոյթի եւ իր տեղաշարժերի հետ գործել Անիում, Հաղբաշարժերի հետ գործել Անիում, Հաղբատում, Բջնիում, Կեչառիսում, Հաւուց թաւում, Տարօնի Ս. Կարապետ վանքում, ունեցել է բազմաթիւ աշակերտներ, որոնցից մի քանիսը հասել են եպիսկոպոսութեան աստիճանի: Այս ամէնի հիման վրայ էլ՝ նրա գործերը բազմատեսակ են. պահպանուել են՝

ԹՂԹԵՐԸ՝ իր ժամանակի քաղաքական, եկեղեցական եւ գիտական գործիչներին⁴⁴ կամ իր մտերիմներին ուղղուած 88 նամակ⁴⁵ (մի մասը՝ չափածոյ), որոնք ունեն դաւանաբանական, գիտական եւ իմաստասիրական, քերականական ու հոնտորական եւ կենցաղային ու մտերմական բնոյթ. գրուած լինելով մեծ մասամբ խրթնաբան (նմանահունչ եւ հոմանիշ բառերի կուտակումների) ոճով, դժուարահասկանալի են, բայց իր եւ նախորդած ժամանակների մշակոյթին, գիտութեանը եւ պատմութեանը վերաբերող հսկայական նիւթ են պարունակում: Հայ գրականութեան մէջ անձնական-մտերմական նամականի գրատեսակի պահպանուած հնագոյն գործերն են (աւելի հին

ըր դաւանաբանական բնոյթի պաշտօնական նամակներ են):

ՉԱՓԱԾՈՆԵՐ՝ ե՛ւ հոգեւոր բնոյթի են, ե՛ւ՝ թղթերի նման, վերաբերում են զանազան գիտական ու այլ հարցերի. առաւել նշանաւորը յայտնի է «Հազարտողեան» անունով, վերարտադրում է Հին եւ Նոր կտակարանների բովանդակութիւնը եւ գրուել է ի պատասխան Մանուէլ անունով մի արաբ գիտնականի պնդման, թէ չափածոյ Ղուրանի արժէքը շատ աւելի բարձր է, քան՝ քրիստոնէութեան՝ արձակ գրուած Աստուածաշունչը: Մագիստրոսն իր այս ստեղծագործութիւններով⁴⁶ բաւական զարգացրել է հայկական տաղաչափութիւնը եւ յանգաբանութիւնը:

ՄԵԿԵՆՈՒԹԻՒՆ ՔԵՐԱԿԱՆԻ՝ դասագիրք է՝ գործածուած իր ղեկավարած եւ հետագայի այլ դպրոցներում. հայկական քերականագիտական եւ մանկավարժական միտքն այս երկի շնորհիւ մեծ առաջընթաց է ունեցել⁴⁷:

ԹԱՐԳՄԱՆՈՒԹԻՒՆՆԵՐ՝ իր իսկ հղորդումների համաձայն՝ հին յունական գիտական շատ գործեր է հայերէնացրել, բայց քիչ բան է պահպանուել՝ Եւկլիդէսի «Սկզբունքներ»ը, Պլատոնի՝ «Տիմէոսի եւ Փեդոնի տրամախօսութիւն»ը (գիւլոգ) եւ այլն⁴⁸:

ՊԵՏՐՈՍ ԳԵՏԱՊԱՐԺ՝ կաթողիկոսը (1019-1054 թթ., մահ. 1058 թ.)⁴⁹ ըստ աղբիւրների հաղորդումների՝ եղել է բարձր կրթութեան եւ գիտութեան տէր. պահպանուել են նրա յօրինած՝ գրական արժանիքներ ունեցող շարականներ, իսկ զանազան ճառերն ու բազմաթիւ նամակները չեն պահպանուել:

Անանիա Սանահնեցի (ԺԱ. դարի (մ. ժ. 1070 թ.) նշանաւոր գիտնական էր, Սանահնի վանքի միաբան, ուսուցիչ եւ հեղինակ դաւանաբանական ու դասագրքային

24x15, միասիւն, բոլորգիր եւ երկաթազիր՝ խառն, 19 տող:

Եղմ 1801. Բարսեղ Կեսարացու Գիրք վեցորէից, Սամուէլ Անեցու ժամանակգրութիւն, Հոռոմոս, 1187 թ., Գրիչ եւ ստացող՝ Յովհաննէս քհյ, 282 թերթ, թուղթ, 25,5x16,5. միասիւն, բոլորգիր, 22 տող:

ՄՄ 3613. Սամուէլ Անեցի, Հաւաքմունք ի գրոց պատմագրաց, ԺԲ դ., Հոռոմոսի վանք, Գրիչ՝ Մխիթար Անեցի եւ անանուն, 79 թերթ, թուղթ, 16,5x11,5. միասիւն, բոլորգիր եւ նոտրգիր, 26 եւ 18 տող:

ՄՄ 5554. Աւետարան, ԶարեհՀանի վանք, ԺԲ դ., Կազմող՝ Վանական, Ստացող՝ Գրիգոր, 278 թերթ, մագաղաթ, 25x18. երկսիւն, բոլորգիր, 20 տող:

ՄՄ 6288. Աւետարան Հաղբատի, 1211 թ. Հաղբատ (գրչութիւնը) Հոռոմոս (ծաղկումը), Գրիչ՝ Յակովբ, Մարգարէ, Ծաղկող՝ Մարգարէ (գրչիւր), Կազմող՝ Աբրահամ, Ստացող՝ Սահակ վրդ., 360 թերթ, մագաղաթ, 30x22, երկսիւն, երկաթազիր, 19 տող:

ՄՄ 1382. Ժողովածու (Յովհաննու Ոսկեբերանի Մեկնութիւն թղթոյն եփեսացոց, Ագաթոնի Վասն վերջին ժամանակին). 1219 թ., Հառիճայ վանք. Գրիչ եւ Ստացող՝ Յովհաննէս. 316 թերթ, թուղթ, 25,3x16. միասիւն. բոլորգիր. 21 տող:

ՄՄ 1519. Աւետարան Բագնայրի, 1232 թ., Հոռոմոսի վանք, Գրիչ եւ ստացող՝ Իգնատիոս, Ստացող՝ Պարոն Խառն, 299 թերթ, մագաղաթ, 42x29, երկսիւն, երկաթազիր, 17 տող:

Ն-Ձ 36/156. Աւետարան (նկարազարդ), 1236 թ., [Հոռոմոս], Գրիչ՝ Իգնատիոս Հոռոմոսցի, Ստացող՝ Կարապետ,

406 թերթ, մագաղաթ, 33,5x24. երկսիւն, երկաթազիր, 17 տող:

ՄՄ 6202. Աւետարան Կարմիր, 909 թ., Պոլիս, Գրիչ՝ Թուրթայէլ, Ստացող՝ Աշոտ սպայապետ, Ծաղկող՝ Իգնատիոս Հոռոմոսցի (1236-1242 թթ.), 431 թերթ, մագաղաթ, 36x27,5. երկսիւն, երկաթազիր, 15 տող:

Եղմ 332. Մեկնութիւն Մատթէոսի. 1278ից առաջ, Գրիչ՝ Ստեփանոս, 1278ին Բագնայրում ստացել է Գէորգ վ-ը. 303 թերթ, 25x17, միասիւն, բոլորգիր, 30 տող:

ՄՄ 1342. Իգնատիոս, Մեկնութիւն Ղուկասու, 1292 թ., Երզնկա, Անի, Գրիչ՝ Ահարոն վրդ., 258 թերթ, թուղթ, 24,5x16, միասիւն, բոլորգիր, 27 տող:

ՄՊբ., Արեւել. ինստ. B-44. Աւետարան, 1298 թ. Անիի Ներքին բերդ, Գրիչ՝ Եղբայրիկ արդյ, Ծաղկող՝ Խաչատուր, Ստացող՝ Յակոբ քհյ Անեցի, 167 թ., մագաղաթ եւ թուղթ, 23,5x15,5. երկսիւն, բոլորգիր, 29 տող:

ՄՄ 9649. Աւետարան, ԺԳ դ., Հոռոմոս, Գրիչ՝ Իգնատիոս, 330 թերթ, մագաղաթ, 28,2x20,2. երկսիւն, երկաթազիր, 18 տող:

ՄՄ 2961. Ժողովածու (Սուրբգրական, գիտական), 1321 թ., Գրիչ, ծաղկող եւ կազմող՝ Մխիթար Անեցի, 308 թերթ, թուղթ, 22-14,5. միասիւն, բոլորգիր, 21 տող:

ՄՄ 7740. Աւետարան, Սուլթանիա, 1356-1357 թթ., Գրիչ՝ Մխիթար Անեցի, Ներսէս Մանկտաւազ, Ծաղկող եւ կազմող՝ Մխիթար Անեցի, Ստացող՝ Մոմեղէն սրկ., 393 թերթ, թուղթ, երկսիւն, բոլորգիր, 19 տող:

Վիեննայի 55. Աստուածաշունչ, ԺԴ դ. (1368 թ. առաջ), Անի, Գրիչ՝ Յովհաննէս

նէս եպս. Անուոյ, 588 թերթ, թուղթ, 28x18,5. երկսիւն, բոլորգիր, 47 տող:

ՄՄ 1587. Շարակնոց, 1423 թ., Սանահին, Գրիչ Յովհաննէս Անեցի (Ոսկեփորիկ), Ստացող՝ Յովհաննէս Սանահինցի, Ծաղկող՝ Յովհաննէս Սանահինցի, Մելքիսեթէկ: Կազմող՝ Աստուածատուր, 344 թերթ, մագաղաթ, 12,2-8. միասիւն, բոլորգիր, 18 տող:

Ն-Ձ 59/94. Աւետարան, 1585 թ. Հոռոմոս, Գրիչ եւ ստացող՝ Յովհաննէս եպս. Հոռոմոսի, 235 թերթ, թուղթ, 31x21. երկսիւն, բոլորգիր, 21-24 տող:

ՄՄ 678. Ժողովածու (դասագրքային), 1673 թ., Հառիճոյ վնք (Ղփչաղ). Գրիչ՝ Սուքիաս Ղափանցի. Ստացող՝ Ներսէս Ղազվինցի. 202 թերթ, 18,7x12,7. միասին. նոտրգիր. 24 տող:

Եղմ 2429. Ժամագիրք. 1707 թ. Հառիճայ վանք, Գրիչ եւ ստացող՝ Տիմոթէոս արդյ Եւդոկիացի, 207 թերթ, մագաղաթ, 8,5x6, միասիւն, բոլորգիր, 22 տող:

Եղմ 2023. Առաքել Սիւնեցի, Մեկնութիւն Սահմանացն Դաւթի, Հոռոմոս (Ղոշավանք), 1782 թ., Գրիչ եւ ստացող՝ Գրիգոր արդյ, 125 թերթ, թուղթ, 21x15, երկսիւն, նոտրգիր, 32 տող:

ՄՄ 8493. Աբուսայիդայ Յաղագսկազմութեան մարդոյ, 1791 թ., Տիկոր գիւղ, Գրիչ՝ Կարապետ Ալաշկերտցի, 110 թերթ, թուղթ, 15,5x11. միասիւն, նոտրգիր, 14 տող:

ՄՄ 8528. Ժողովածու (գուշակողական-աստղագիտական), ԺԸ դ., Տիկոր գիւղ, Գրիչ՝ Կարապետ Ալաշկերտցի, 119 թերթ, թուղթ, 15x10,5. միասիւն, նոտրգիր, 14-16 տող:

ՄՄ 8334. Վեցհազարեակ, 1800 թ., Տիկոր գիւղ, 101 թերթ, թուղթ, 16x10,5, միասիւն, նոտրգիր, 18-26 տող:

ՄՄ 9989. Գրիգոր Նարեկացի, Մեկնութիւն Երզոց երգոյն, 1838 թ., Սառիկար գիւղ Շիրակի, Գրիչ եւ ստացող՝ Զաքարիա քհյ, 38 թերթ, թուղթ, 22x17,5. միասիւն, նոտրգիր, 25 տող:

ՄՄ 4596. Ժողովածու (վկայաբանական). 1844 թ. Հառիճ, Գրիչ՝ Մինաս դպիր, Սացող՝ Աբրահամ վրդ., 39 թերթ, թուղթ, 21,5x17,5. միասիւն, շղագիր, 18-19 տող:

ՄՄ 4528. Ժողովածու (ուսումնական-պատմական), 1850 թ., Բողազքեսան գիւղ Շիրակի, Գրիչ՝ Սիմէօն Ալեքով Շիրակացի, 17 թերթ, թուղթ, 17,5x11. միասիւն եւ երկսիւն, բոլորգիր եւ շղագիր, 22-23 տող:

ՄՄ 7937. Ժողովածու (դաւանաբանական-ծիսական), 1853 թ., Հառիճ, Գրիչ՝ Տէր Սարգիս, Գրիգոր վրդ. Աբրահամեան, 62 թերթ, թուղթ, 21x17,2. միասիւն, շղագիր, 24-25 տող:

ՄՄ 4566. Կիւրեղ Սրապեան, Մատենագրութիւնք (դասագրքային), 1878-1891 թթ., Հառիճ, Դերբէնդ, Էջմիածին, Գրիչ՝ Հեղինակը, 172 թերթ, թուղթ, 35,5x22. միասիւն, շղագիր, 38-52 տող:

ՄՄ 3748. Հերոնիմոս Լորենցիոս, Անտառ այլաբանութեան, 1893 թ., Սանգիւրի գիւղ Շիրակի, Գրիչ՝ Մելքիսեդեկ Գէորգեանց, 265 թերթ, թուղթ, 34x21,5, միասիւն, շղագիր, 37 տող:

ՄՄ 6517. Ժողովածու (պատմագրական, ուսումնական, բանաստեղծական), ԺԸ դ., 1844 թ., Հառիճ, 31 թերթ, թուղթ, 22x17. միասիւն եւ երկսիւն, նոտրգիր, 24-30 տող:

ՄՄ 6891. Ժողովածու (ուսումնական-հանրագիտական), 1855-1858 թթ., Բողազքեսան գիւղ Շիրակի, Գրիչ՝ Հաւա-

քողը, 131 թերթ, թուղթ, 17,5x10,5. միասին, բոլորգիր, 21-23 տող:

ՄՄ 9030. Միքայել Չամչեան, Վահան Հաւատոյ, 1862 թ., Հառիճ, Գրիչ եւ ստացող՝ Մինաս Յարութիւնեան-Վահանեանց, 86 թերթ, թուղթ, 20,5x17. միասին, շղագիր, 23 տող:

Եղմ 2983. Յակովբ քհն. Տէր-Մխիթարեանց, Արկածք Գազկայ արքայի, 1870 թ., Ալեքսանդրապոլ, Գրիչ՝ Թէոդորոս վ. Շիրակունի, 64 թերթ, թուղթ, 22x18, միասին, շղագիր, 20 տող:

ՄՄ 10892. Պետրոս Աղամալեան, Ազբիւր բացեալ. ԺԹ դ., (1873 թ.), [Ալեքսանդրապոլ], 82 թերթ, թուղթ, 23,3x17. միասին, նոսրգիր եւ շղագիր, 27 տող (ունի՝ կնքադրոշմ «Մատենադարանի կղերական դասուց Հայոց Ալեքսանդրապոլի. 1873»):

ՄՄ 10585. Նաղաշ Յովնաթանի Տաղարան, 1890 թ., Ալեքսանդրապոլ, 19 թերթ, թուղթ, երկսիւն եւ միասին, շղագիր, 19-34 տող:

ՄՄ 8757. Մելքիսեդեկ Գէորգեանց, Բարոզգիրք, ԺԹ. դ., Շիրակ, գրիչ՝ Հեղինակը, 323 թերթ, թուղթ, 16,8x10,5. միասին, նոսրգիր, 21 տող:

ԾԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

1 Թորոսաձի ֆրանսերէն թարգմանութիւնը երկմասն տեսքով տպագրուել է Բետելեալ ժողովածուի մէջ՝ Ani: Capitale de l'Arménie en l'an mil, Ouvrage réalisé sous la direction de Raymond H. Kévorkian, Paris musées, Paris, 2001, 314 p. (Les centres intellectuels et scriptoria du áirak au temps des Bagratides d'Ani - pp. 237-42, La littérature arménienne au temps des Bagratides d'Ani - pp. 259-263), որ Փարիզի Pavillon des Arts ցուցարահում 2001 թ. Փետրուարի 7ից Մայիսի 13ը կայացած ցուցահանդէսի ուղեցուց-պատկերագիրքն է: Այստեղ Բագրատունեան կամ Անի մայրաքաղաքի ծաղկման շրջանի հայաստանեան մշակութային միջավայրի գիտութիւնների տարբեր ասպարէզներ (պատմագրութիւն, բժշկագիտութիւն) եւ որոշ անհատների (Յովհաննէ Սարկաւազ եւ այլն) վաստակը ներկայացուած է

ուրիշ հեղինակների յօդուածներով, ուստի մենք հիմնական գծերով եւ իւրայատկութիւններով պատկերել ենք նոյն ժամանակի հայ մատենագրութեան միայն միւս տեսակները, որոնց հիմնական մասը մի փոքր կոպիտ եւ ընդհանուր բնորոշումով կարելի է կոչել եկեղեցական-դասանական կամ հոգեւոր բնույթի գրականութիւն անունով: Մեր շարադրանքը, բնականաբար, նաեւ պայմանաւորուած է նոյն ժողովածուի նպատակադրումով եւ սահմանած ծաւալով, այսինքն՝ ցուցադրուած միւսի հետքի վրայ, որոշակի փոքր ծաւալի մէջ եւ օտար՝ անտեղեակ ընթերցողին նկատի ունենալով, ներկայացրել ենք հայ հոգեւոր մշակույթի՝ մեր խնդրոյ առարկան, որ եւ թելադրել է շատ մանրամասներով յայտնի փաստերի համառօտ վերաբերմաներ, որեւէ հարցի վերաբերող գրականութիւնից միայն կարելոք բացառել յիշատակում եւ այլն: Սրանով հանդերձ, այստեղ արուած են մշակութաբանական որոշ խնդիրների նոր դիտարկումներ, ապա նոյն փոքր ծաւալի մէջ հայերէն հայագիտութեանը եւ հայ ընթերցողին ներկայացուած է մեծ երեսոյթի համառօտ ուրուագիծը:

2 Տե՛ս Հայ ժողովրդի պատմութիւն. Հայաստանը զարգացած ֆեոդալիզմի դարաշրջանում (Թ. դ. կեսերից մինչեւ Ժ. դ. կեսերը), հ. Գ., Երեւան, 1976, էջ 309-18:

3 Վերջում որպէս յաւելում ներկայացնում ենք ցանկը Թիրակի մշակութային կենտրոններում ստեղծուած՝ մեզ յայտնի ձեռագրերի, որոնք բազմաթիւանող են, այսինքն՝ Թիրակում օրինակուել են բոլոր տեսակների՝ գիտական, դասագրքային, դասանաբանական եւ ծիսական գրքեր:

4 Ղ. Ալիշան, Թիրակ. Տեղագրութիւն պատկերացոյց, Վենետիկ, 1881, էջ 16 (այսուհետեւ՝ Ալիշան, Թիրակ). Մ. Արքեպս. Օրմանեան, Ազգապատմ. Հայ ուղղափառ եկեղեցւոյ անցքերը սկիզբէն մինչեւ մեր օրերը, հ. Ա., Կոստանդնուպոլիս, 1912, էջ 672: Յ. Անասեան, Հայկական մատենագիտութիւն. Ե-ԺԸ. դդ., հտ. Բ., Երեւան, 1976, էջ 1410-2:

5 Անասեան, Ա., էջ 731-3:

6 Տե՛ս Ալիշան, Թիրակ, էջ 126-42՝ Խծկօցքի, Մրեւի եւ Տեկորի տաճարների արձանագրութիւնները:

7 Տե՛ս Հ. Վարդան Հացունի, Դաստիարակութիւնը հին հայոց քով, Վենետիկ, Ս. Ղազար, 1923, էջ 93-117. հմմտ. Ա. Խ. Մովսիսեան, Ուրուագծեր հայ դպրոցի եւ մանկավարժութեան պատմութեան, (Ե-ԺԵ. դարեր), Երեւան, 1958, էջ 30-1:

8 Տե՛ս Հ. Վարդան Հացունի, Աշ. աշխ., էջ 217-21: Գրիգոր Մագիստրոսի նկարագրած ուսումնական մի փոքր ակադեմիան ընդարձակ եւ մանրամասնուած ծրագրի մասին տե՛ս Մանուկ Աբեղեան, Հայոց հին գրականութեան պատմութիւն, Գիրք երկրորդ (Ժ-ԺԵ. դարեր).- Երկեր, հ. Դ., Երեւան, 1970, էջ 37-9: Ուսման մակարդակներին, դասա-

ամբողջ առարկաներին եւ ընդհանրապէս պահանջներին ու եղանակներին վերաբերող գիտելիքների ընդարձակ շարադրանք տե՛ս նաեւ՝ Լ. Գ. Խաչերեան, Հայագիր դպրութեան ուսումնագիտական կենտրոնները. դպրոցները, դպրեվանքերը, վարդապետարանները, ճեմարանները, ակադեմիաները եւ համալսարանները միջնադարեան Հայաստանում (Ե-ԺԸ. դդ.), Լիզպոն, 1988, Մասն Ա., 135-90:

9 Կային նաեւ Առանձնական՝ վարդապետի կամ գիտնական-քարոզչի կոչում ունեցող որեւէ անհատի գլխաւորած մասնաւոր դպրոցներ, որոնք քահանաներին կրթում էին՝ շուրջ երեք տարում սովորեցնելով Աստուածաշունչ, շարականերգութիւն, պատարագ, ժամասացութիւն, նուագագոյն թուաբանութիւն եւ տոմարագիտութիւն:

10 Ղ. Ալիշան, Թիրակ, էջ 126: Ազարակում կար երկու եկեղեցի՝ մէկը Ե. դ., որի շուրջ կային Դ-Ե. դդ. քարակոթողներ. միւսը՝ Է. դ., որ ունէր Ժ-ԺԱ. դդ. արձանագրութիւններ, ԺԵ-ԺԷ. դդ. ձիարձաններ եւ կենցաղային պատկերներով տապանաքարեր. անպայման մշակութային կարելոք կենտրոն է եղել, բայց ձեռագրական որեւէ յիշատակ չունենք:

11 Մատթէոսի Ուոհայեցւոյ Ժամանակագրութիւն, Վաղարշապատ, 1898, էջ 183-4:

12 Ստեփաննոս Տարօնցի Ասողիկ, Պատմութիւն տիեզերական, Սանկտ Պետերբուրգ, 1885, էջ 184-6. հմմտ. Կարէն Մաթեոսեան, Անի. եկեղեցական կենտրոն եւ ձեռագրական ժառանգութիւնը, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, 1997 էջ 23-26, 323-4 (այսուհետեւ՝ Կ. Մաթեոսեան):

13 Տե՛ս Ալիշան, Թիրակ, էջ 121-123:

14 Տե՛ս Յ. Շղիագարեան, Հմբատավանքը եւ նրա արձանագրութիւնները.- Էջմիածին, Բ/1960, էջ 50-57:

15 Տե՛ս Ալիշան, Թիրակ, էջ 111-122:

16 Արձանագրութիւնները տե՛ս Ալիշան, Թիրակ, էջ 147-154, ապա՝ Յ. Շղիագարեան, Մարմաշէնի վանքը եւ նրա վիճակագրութիւնները.- Էջմիածին, Ե/1957, էջ 33-45:

17 Արեւմտեան Թիրակի վանքերը, մնացած յինչով թուրքիայի տարածքում, քսաներորդ դարի կեսերին հիմնականում աներուել են, առաւել յաճախ՝ պայթեցումներով:

18 Մատթէոսի Ուոհայեցւոյ Ժամանակագրութիւն, Վաղարշապատ, 1898, էջ 183: Ինչպէս՝ հայ իրականութեան մէջ միշտ, նոյնպէս եւ այս շրջանում, ուսումնագիտական որոշ կենտրոններ կայուն եւ երկարակեաց են եղել, ուրիշները՝ բացուել են որեւէ գիտնական-վարդապետի ջանքերով եւ ունեցել են միայն նրա կամ, առաւել, նաեւ նրա յաջորդի կենցիկի չափ ժամանակ. այս սակաւկեցութեան հիմնական պատճառը եղել է պատմական պայմանների անկայունութիւնը:

19 Թ. Խ. Յակոբեան, Անիի պատմութիւն (Հնագոյն ժամանակներից մինչեւ 1045 թ.), Երեւան, 1980, էջ 336:

20 Ալիշան, Թիրակ, էջ 18-34:

21 Կ. Մաթեոսեան, էջ 217-319. էջ 373-5՝ թուարկել է իր օգտագործած 52 ձեռագիր, որոնց զգալի մասը գրուած է Անիում կամ նրա շրջակայքում:

22 Վանք կամ եկեղեցի կառուցող ազնուականները նրանց հետագայ կենսագործունէութիւնն ապահովելու համար սկզբից եւեթ հեճնց իրենք էին նրանց ձեռագրեր նուիրում:

23 ԺԹ. դ. վերջերից մինչեւ 1930ական թուականները կաթողիկոսական կոնգրակների ուժով կամ այլ միջոցառումների շնորհիւ Արեւելեան Հայաստանի տարածքի գրեթէ բոլոր վանքերին ու եկեղեցիներին տպագիր գրքեր տրուեցին եւ փոխարեւը նրանց պատկանած ձեռագրերը բերուեցին Էջմիածնի (ներկայիս՝ Մաշտոցեան) Մատենադարան. դրանց մէջ կան նաեւ Թիրակի տարբեր վայրերի մշակութային կենցիկի մաս կազմած բազմաթիւ արժէքաւոր մատենաներ. տե՛ս Օ. Ե. Գանեան, Մատենադարանի ձեռագրական հաւաքածոները.- Ցուցակ ձեռագրաց Մաշտոցի անուան Մատենադարանի, հ. Ա., Երեւան, 1965 էջ 72-4, 123: Հետագայ տարիներին Թիրակից Մատենադարան են եկել տասնեակ այլ ձեռագրեր, օրինակ՝ ձեռ. Հմր 10480, 10485, 11038-11041 եւ այլն:

24 Թ. դարի են 6-ը, Ժ. դարի՝ 19-ը, ԺԱ. դարի՝ 24-ը, ԺԲ. դարի՝ 69-ը, ԺԳ. դարի՝ 380-ը. ըստ որում՝ սրանցից յիշատակարան չունեցող եւ մօտաւոր թուագրումով, այսինքն՝ չտեղորոշուած են Թ. դարին վերաբերող 5-ը, Ժ. դարի՝ 12-ը, ԺԱ. դարի՝ 13-ը, ԺԲ. դարի՝ 69-ը, ԺԳ. դարի՝ 188-ը:

25 Միջազգային տարանցիկ աշխոյժ անտարի կարելոք հանգուցակելու Անի եւ նրա մշակութային միջավայրը ունեն նաեւ օտար ազդեցութիւնների ցայտուն դրսեւորումներ, որոնք զգալիօրէն պարզուած են Անիի արուեստներին վերաբերող գրականութեան մէջ:

26 Պատահական չէ, որ ըստ աղբիւրներում պահպանուած տեղեկութիւնների՝ Ը-ԺԳ. դարերի շատ հեղինակներ ստեղծել են տարաբնոյթ, այդ թում՝ նաեւ պատմագրական կարելոք եւ արժէքաւոր տասնեակ երկեր, որոնք չեն պահպանուել եւ մեզ չեն հասել:

27 Հառիճի բազմաթիւանող արձանագրութիւնները տե՛ս Ալիշան, Թիրակ, էջ 157-164: Այս բնական վայրի տարածքի հնավայրերի պեղումները կոյց են տալիս, որ բրոնզի դարից մինչեւ մեր օրերն այնտեղ անընդմէջ բնակութիւն է եղել:

28 Տե՛ս Հատանայի վանական ընկերութեան յիշատակարանն ու հաշիւը, Ալեքսանդրապոլ, 1909:

29 Հմմտ. Ալիշան, Թիրակ, էջ 143-5, 154-5:

30 Քրիստոնէական կրօնի եւ եկեղեցւոյ գործածող յատկերէնի ընդհանրութեան հիմքի վրայ գրեթէ ողջ միջնադարի ընթացքում հոգեւոր-մշակութային կենցիկի միասնականութիւն է եղել նաեւ Արեւմտեան Եւրոպայի երկրներում, ուր, անհնգ, ազգային լեզուներով պատմագրութիւնն սկսել է առաջանալ միայն ԺԳ-ԺԴ. դարերում:

31 Հայ մատենագրության տարբեր շրջանների մեջ նույնպես կարող են առկա լինել մեկի սկիզբը միջոտ միսի աարտի մեջ է եղել: Մանր գործերով յայտնի է այստեղ չներկայացրած միս հեղինակների մասին տե՛ս հայ միջնադարեան գրականության հետազոտող լաւ տեսութիւնները՝ V. Inglisian, *Die Armenische Literatur*.- Handbuch der Orientalistik, I. Abteilung, 7 Band, Ed. G. Deeters, Leiden-Cologne, 1963, p. 156-272; H. Torossian, *Histoire de la littérature arménienne, des origines jusqu'a nos jures*, Paris, 1951; Ch. Renoux, *Lingue et littérature arméniennes.- Christianismes orientaux*, Ed. M. Albert, Paris, 1993, p. 109-166:

32 Մանրամասն տե՛ս Բ. Առաքելեան, *Քաղաքները եւ արհեստները Հայաստանում Թ-ԺԳ. դարերում*, հտ. Ա-Բ., Երևան, 1958-1963:

33 Այս շրջանի աշխարհական հեղինակների մասին տե՛ս, օրինակ՝ Հ. Պօղոս Անանեան, *Ներսէս Բագրեւանդացի իշխան Հայոց՝ հեղինակ դասանաբանական գրութեան մը*, Վենետիկ, Ս. Ղազար, 1989:

34 Բիզանդիայի հալածական այդ քաղաքականութեանը վերաբերող տեղեկութիւնների ամփոփումը տե՛ս Մ. Արքեպս. Օրմանեան, *Ազգայատում*. Հայ ուղղափառ եկեղեցւոյ անցքերը սկիզբէն մինչև մեր օրերը, հ. Ա, Կոստանդնուպոլիս, 1912, էջ 1100-1102 (այսուհետեւ՝ Մ. Օրմանեան, Ա.):

35 Ա. Մաթեոսեան, *Անանիա Օրբակացու «Քննիկոնը»*.- ՀՍՍՀ ԳԱ Լրագրեր հասարակական գիտութիւնների, 1974/7, էջ 66-81:

36 Գրեթէ բոլորին վերաբերող ֆրանսերէն կամ անգլերէն կարեւոր գրականութիւնը ցանկուած է հայ գրականութեան նորագոյն համառօտ-ուսումնական մատենագիտութեան մէջ՝ A Bibliography of Classical Armenian Literature to 1500 AD, By R. W. Thomson, Brepols - Turnhout, 1995, 324 p.:

37 Տե՛ս Զաքարիա կաթողիկոս ագեցի (855-877), *Մատեն. Աշխատասիրութեամբ Հ. Պօղոս վրդ.ի Անանեան, Վենետիկ - Ս. Ղազար, 1995:*

38 Նրա օրօք գործել է իրենց աշխատութիւններն են ստեղծել Սահակ Մոռտ-Ապիկուրէշը, Համամ Արեւելցի, Ատոմ Անձեւացի եւ ուրիշներ. տե՛ս Մ. Օրմանեան, Ա., էջ 980-2:

39 Տե՛ս Գ. Տէր-Մկրտչեան, *Անանիա Մոկացի [Ուսումնասիրութիւն եւ բնագրեր]*.- Արարատ, 1897, էջ 91-96, 129-44, 275-88. հմմտ. Հ. Կիրեղ վրդ. Քիպարեան, *Պատմութիւն հայ հին գրականութեան*, Վենետիկ, Ս. Ղազար, 1992, էջ 327:

40 Տե՛ս Հ. Թամրազեան, *Անանիա Նարեկացի. կեանքը եւ մատենագրութիւնը*, Երևան, 1986:

41 Տե՛ս Օրմանեան, Ա., էջ 1144:

42 Տե՛ս I. Kéchichichian, *Grégoire de Narek, Le Livre de prières, Sources chrétiennes*, 78, Paris, 1961.

43 Տե՛ս Թ. Քիրոսեան, *Յովհաննէս Կոզեան.- Հաւնդէս ամսօրեայ*, 1967, էջ 1-16:

44 Որպէս հոչակաւոր գիտնականներ եւ ուսուցիչներ այս աստիճանից յայտնի են Սեւակի վանքի առաջնորդ Սարգիսը, Խանատի վանքի առաջնորդ Սամուէլ վարդապետը եւ ուրիշներ, որոնց գործերը, սակայն չեն պահպանուել. տե՛ս Գ. Զարպիսեան, *Պատմութիւն հայ հին դպրութեան (Դ-ԺԳ դար)*, Վենետիկ, 1932, էջ 590-591

45 Տե՛ս Գրիգոր Մագիստրոսի թղթերը, Բնագիրն յառաջաբանով եւ ծանօթութիւններով առաջին անգամ ի լոյս ընծայեց Կ. Կոստանեանց, Աղեքսանդրապօլ, 1910:

46 Տաղասացութիւնք Գրիգորի Մագիստրոսի Պահլաւունոյ, Վենետիկ, 1868:

47 Տե՛ս Լ. Գ. Խաչերեան, *Գրիգոր Պահլաւունի Մագիստրոս (985-1058 թթ.)*. Կեանքն ու գործունէութիւնը, Լոս Անձելոս, 1987, էջ 353-464:

48 Տե՛ս Maurice Leroy, *Grégoire Magistros et les Traductions arméniennes d'autres grecs*.- Annuaire de l'Institute de Philologie et d'Histoire orientales, t. III, Bruxelles, 1935, p. 263-94:

49 Որպէս գործիչ բիզանդամետ քաղաքականութիւն է վարել եւ դրանով նպաստած լինելով Բագրատունեաց թագաւորութեան կործանմանը՝ ժամանակակիցների եւ հետագայ սերունդների յիշողութեան մէջ մնացել է դասաճանի համբաւով՝ տե՛ս Մ. Օրմանեան, Ա., էջ 1189-1254:

50 Տե՛ս Թ. Անասեան, *Հայկական մատենագիտութիւն Ե-ԺԸ. դդ.*, հտ. Ա, Երևան, 1959, էջ 775-86. հմմտ. Թ. Քեօսեան, *Անանիա Սանահնեցիի Էջմիածին, 2000 (Աստուածաբանական բնագրեր, ուսումնասիրութիւններ. Գիրք Ա.)*:

51 Տե՛ս Ն. եպս. Պողարեան, *Հայ գրողներ Ե-ԺԸ. դար*, Երուսաղէմ, 1971, էջ 162-3:

52 Մաշտոցեան Մատենադարանի ձեռ. Հմր 1879 (ԺԳ. դ.):

53 Մաշտոցեան Մատենադարանի ձեռ. Հմր 695:

54 Ներկայիս մատենադարանների անունները տրուած են հետեւեալ համառօտումներով.
Եղմ = Երուսաղէմի Հայոց պատրիարքարանի Սրբոց Յակոբեանց վանքի մատենադարան.
ՄՄ = Մաշտոցեան Մատենադարան, Երևան.
Ն-Զ = Նոր Զուղայի (Սպահան) Հայոց առաջնորդարանի Սուրբ Ամենաիրկէեան վանքի մատենադարան.
ՍՊբ, Արեւել. հիմն. = Սանկտ Պետերբուրգի Արեւելագիտութեան հիմնարկ.
Վենետիկ = Միսիթարեան միաբանութեան Վենետիկի մատենադարան.
Վիեննա = Միսիթարեան միաբանութեան Վիեննայի մատենադարան:

55 Ֆրանսերէն տարբերակի մէջ (Ani: Capitale de l'Arménie en l'an mil, p. 241) ցանկիս տուեալները համառօտուած են՝ թողնուել են միայն ձեռագրերի գոյքահամարները, անուններն ու գրչութեան թուականները:

DIOSKURIDES UND DIE MITTELALTERLICHE ARMENISCHE PHARMAZIE

Vardanian Stella

Die armenische Medizin, die schon dreitausend Jahre alt ist, hat große Schätze von natürlichen Arzneien, eine uralte Apotheke, wo wir die Vertreter der Flora, der Fauna und anorganischer Natur Armeniens finden. Ihre mündlichen Traditionen sind noch heute am Leben geblieben. Im Laufe der Jahrhunderte diente sie als Fundament für die klassische Medizin und ihre Erfahrung wurde von mittelalterlichen Ärzten bearbeitet und in Pharmacognosien hineingenommen. Die Klassiker der mittelalterlichen Medizin Mechithar Herazi und Amirdovlat Amasiazi haben in ihren Heilbüchern und insbesondere in den speziellen Arzneibüchern viele Arzneien vom Arsenal der Volksmedizin beschrieben (7, 16, 17, 21, 23, 24, 27).

Die mittelalterliche armenische Pharmazie, die tief im Altertum wurzelt und sich von den Quellen der Volksmedizin nährte, wurde in ihren verschiedenen Entwicklungsstufen von der antiken Medizin entscheidend beeinflusst (11,13,38).

Nach der Erfindung des armenischen Alphabets durch Mesrop Maschtotz um 404/5 wurden in den 2 Übersetzergenerationen, der sogenannten Hellenophilen Periode, von etwa V-VII Jh. gewiß auch die wesentlichen Werke der antiken Medizin ins Altarmenische übersetzt; diese Schriften sind jedoch nicht alle erhaltengeblieben (18,20). Sie aber waren im Mittelalter in Armenien gut bekannt. Eznik von Kolb, Davit Anhalt, Anania von Schirak und Grigor Magistros sind Zeugen dafür. Sie dürften in griechischen Schulen ausgebildet worden sein, zumindest zitieren sie oft die griechischen Originale (13,38).

Die Überlieferung der Werke von Hippocrates, Dioskurides, Galen und anderen antiken Ärzten ist kompliziert und kann manchmal nur mit Hilfe zahlreicher Hypothesen erschlossen werden.

Kleinasien war die Heimat von drei berühmten Botanikern der Antike - Krateuas, Dioscurides und Galen (4, 6, 10, 12, 38). Krateuas von Pergamon um 100 vor Christus wirkte als Leibarzt am Hof des Königs Mithridates von Pontos. Dioskurides stammte aus Anazarbos in Kilikien und war Militärarzt unter den Kaisern Claudius und Nero. Schließlich ist als der letzte große Arzt der Antike Galen aus Pergamon zu nennen.

Krateuas dürfte die beiden ersten Kräuterbücher verfaßt haben, die aber nicht erhaltengeblieben sind, sie fußen möglicherweise auf ägyptischen Vorbildern, die sich aus freilich viel späteren Papyrusblättern, den sogenannten Jonson Papyrus-Blättern mit botanischen Illustrationen um 400 postulieren lassen. Es darf angenommen werden, daß Krateuas seine Bücher mit eigenhändigen Illustrationen versehen hat, in der für ein breiteres Publikum bestimmten Version waren die Kräuternamen alphabetisch angeordnet. Einige der farbigen Bilder aus dem Kräuterbuch des Krateuas wurden durch Dioskurides in das Werk "De materia medica" übernommen.

Dioskurides wurde in Tarsus ausgebildet. Die Stadt galt nach Alexandria als das größte Zentrum der Antike für die Pharmazie.

Während vieler Jahre war Dioskurides praktischer Arzt; er sammelte auf seinen Reisen durch Griechenland, Kilikien, Arme-